Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-141-25.01.2022,21.03.2022-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նախադպրոցական կրթության մասին» 2005 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-236-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի.

1. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ՝ հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ, որը բխում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից, սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունք- ների ապահովման հիմքերը.»:

2. 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«15) նախադպրոցական ծառայություններ՝ նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, խնամքին և հսկողությանը միտված ծառայություններ, որոնք ապահովվում են սահմանված նորմատիվների առկայության պայմաններում՝ պայմանագրային հիմունքներով.».

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասում «Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից» բառերից հետո լրացնել «և ավարտվում է օգոստոսի 31-ին» բառերը:

Հոդված 3. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ և 25-րդ կետերով, հետևյալ բովանդակությամբ՝

«21) մշակում և հաստատում է նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստող կազմակերպության ընտրության կարգը».

22) սահմանում է նախադպրոցական ծրագրերի և ծառայությունների տևողությունը.

23) սահմանում է 0-6 տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը.

24) կարող է սահմանել համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը.

25) սահմանում է համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման, տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության և տարակարգ ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճար տրամադրելու կարգերը:»:

Հոդված 5. Սույն օրենքի 4-րդ հոդվածից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 6-ամսյա ժամկետում:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~Առաջին ընթերցում~~
Երկրորդ ընթերցում

Կ-141-25.01.2022,21.03.2022-ԳԿ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ***ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ*** ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նախադպրոցական կրթության մասին» 2005 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-236-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի.

3. ~~1) 3~~2-րդ կետը շարադրել ***հետևյալ խմբագրությամբ***՝

«2) նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ՝ հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ, որը բխում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից, սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և արգացման վերջնարդյունքների ապահովման հիմքերը~~.»,~~.»:

4. ~~2)~~ 15-րդ կետը շարադրել ***հետևյալ խմբագրությամբ*** ՝

«15) նախադպրոցական ծառայություններ՝ նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, խնամքին ~~եւ~~և հսկողությանը միտված ծառայություններ, որոնք ապահովվում են սահմանված նորմատիվների առկայության պայմաններում՝ պայմանագրային հիմունքներով.».

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ ~~կետում~~***մասում*** «Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից» բառերից հետո լրացնել «~~եւ~~ ***և*** ավարտվում է օգոստոսի 31-ին» բառերը~~:~~:

Հոդված 3. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ ~~եւ~~և 25-րդ կետերով, ***հետևյալ*** բովանդակությամբ՝

«21) մշակում ~~եւ~~և հաստատում է նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների ~~եւ~~և մանկավարժական աշխատողների վերապատրաստող կազմակերպության ընտրության կարգը».

22) սահմանում է նախադպրոցական ծրագրերի ~~եւ~~և ծառայությունների ***տևողությունը.***

23) սահմանում է 0-6 տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը.

24) ~~***սահմանում է***~~***կարող է սահմանել*** համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը.

25) սահմանում է համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման, տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ***ձևավորման և*** գործունեության և տարակարգ ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճար տրամադրելու կարգերը:»:

Հոդված 5. Սույն օրենքի ~~1-ին հոդվածի~~ 4-րդ ***հոդվածից բխող*** ենթաօրենսդրական իրավական ***ակտերն ընդունվում են*** սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 6~~-ամսվա ընթացքում:~~ ***-ամսյա ժամկետում:***

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-141-25.01.2022,21.03.2022-ԳԿ-011/1),
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**Նախագծի վերնագիր**	Օրենքի նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	**1-ին հոդվածի 1-ին մաս**	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «3-րդ» բառն անհրաժեշտ է փոխարինել «2-րդ» բառով, իսկ ««նախադպրոցական կրթության» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «2)» թիվը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 3 բոլոր դրույթները, համաձայն որոնց՝ *հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն **համարակալված** կետերի*, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	**1-ին հոդվածի 2-րդ մաս**	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում ««նախադպրոցական ծառայություններ» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «15)» թիվը:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	**1-ին հոդված**	1. Նախագծի 1-ին հոդվածի մասերի համարակալումն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն	**1-ին հոդվածի 1-ին, 2-րդ մասեր**	«բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Կառավարություն	**2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածում «կետում» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասում» բառով՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ օրենսդրական ակտերում ***հոդվածները բաժանվում են «մասեր»*** կոչվող միայն համարակալված պարբերությունների:	Ընդունվել է	Ընդունվել է

7.	Կառավարություն	**4-րդ հոդված**	4-րդ հոդվածի 24-րդ մասում «սահմանում է» բառերը փոխարինել «կարող է սահմանել» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Կառավարություն	**5-րդ հոդված**	Նախագծի 5-րդ հոդվածն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 5. Սույն օրենքի 4-րդ հոդվածից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 6-ամսյա ժամկետում:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	ՀՀ Աժ պատգամավոր Լիլիթ Գալստյան	Օրենքի նախագծի Հոդված 1-ի 1) 3-րդ կետ	Օրենքի նախագծի Հոդված 1-ի 1) 3-րդ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝ «նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ՝ հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ, որը բխում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից, սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության, դաստիարակության և զարգացման վերջնարդյունքների ապահովման հիմքերը.»:	չի ընդունվել. կրթությունը նպատակաուղղված ուսուցման և դաստիարակության անընդմեջ գործընթաց է, ուստի «դաստիարակությունն» առանձնացնելը նպատակահարմար չէ: Միևնույն ժամանակ՝ «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչում» սահմանված է, որ «Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:»:	Չի ընդունվել

10.	ՀՀ Աժ պատգամավոր Արմեն Գևորգյան	Օրենքի նախագծի 6-րդ հոդված	6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պահանջների կատարման համար անհրաժեշտ ֆինանսավորման չափը Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեի մասին օրենքում ամրագրելու և դրա ուժի մեջ մտնելուց հետո:»:	չի ընդունվել. 4-րդ հոդվածով սահմանված իրավական ակտերի գործարկման ֆինանսական գնահատականը կտրվի դրանց մշակման ընթացքում և կներառվեն պետական բյուջեի միջնաժամկետ ծախսերի ծրագրում	Չի ընդունվել